

ՕՏԱՐ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ՄԱՍՆ Բ.

ԴԱՍԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ
ՀԻՆ ՅՈՒՆԱՐԷՆ ԵՒ ԼԱՏԻՆԵՐԷՆ

Նախաբան

Ներկայ յօդուածով շարունակում ենք այն շարքը, որով լուսաբանում ենք օտար յատուկ անունների տառադարձութեան կանոնները, եւ որը սկսել ենք մերձաւորարեւելեան լեզուներից¹: Յօդուածաշարքի սոյն՝ երկրորդ մասը, նուիրել ենք դասական երկու լեզուից՝ հին յունարէնից ու լատիներէնից, հայերէնին անցած անունների տառադարձմանը: Հայերէնը այդ լեզուների հետ չփման մէջ է մտել դեռեւս հայոց գրերի գիւտից շատ ու շատ առաջ, եւ նրանք արդէն դարեր շարունակ մեզ են մատակարարում բազմաթիւ ու բազմատեսակ անուններ ու հասարակ բառեր:

Եթէ հայերէնը երկար դարեր (Ե.-ԺԺ. դդ.) քիչ թէ շատ միասնական էր մօտենում դասական լեզուներից տառադարձման հարցին (որին մեծապէս նպաստել են բոլոր դարերի հայ հեղինակները), ի. դարում ի յայտ եկան խորը ճեղքուածքի նշաններ: Մի կողմից՝ արեւմտահայ գրական լեզուի արտասանութեան ազդեցութիւնը, սակայն միւս կողմից յատկապէս՝ խորհրդային շրջանի ռուսերէնի ազդեցութիւնը հայաստանեան տառադարձութեան վրայ, առաջ բերեցին իրարամերժ բացասական գծեր, եւ զանազան հեղինակներ տառադարձման տարբեր ուղղութիւններ բռնեցին: Յունարէնն ու լատիներէնը այսօր նուազ ծանօթ են

1 Տե՛ս ՄԻՓԱՅԷԼԵԱՆ, Ա., Օտար Յատուկ Անունների Տառադարձութեան Սկզբունքները (Մասն Ա. - մերձաւորարեւելեան լեզուներ), «Հայկազեան Հայագիտական Հանդէս», 16 (2020), էջ 341-364:

Հայաստանաբնակ նոյնիսկ գիտական Հասարակութեանը, որի հետեւանքով այսօր Հայոց լեզուն տառապում է այն իրավիճակից, երբ յունարէն կամ լատիներէն միեւնոյն անունը կարող է մի քանի ձեւով տառադարձուել:

Թէեւ յունարէնն ու լատիներէնը միեւնոյն լեզուաճիւղին չեն պատկանում, նրանք ոչ միայն ստուգաբանօրէն, այլեւ քերականօրէն մօտ լեզուներ են՝ իրենց բազմաթիւ զուգահեռներով հանդերձ, ունեն հնչիւնա(բանա)կան զգալի ընդհանրութիւններ, որոնց Հայոց աւանդական տառադարձութիւնը մօտեցել է նոյն տրամաբանութեամբ: Որոշակի դէպքերում, Հայերէնը միեւնոյն մօտեցումն է ցուցաբերում յունարէնի ու լատիներէնի քերականական զուգահեռ, սակայն հնչական առումով թեթեւակի տարբեր ձեւերին:

Յունարէնի ազդեցութիւնը լատիներէնի վրայ աւելի խորն է, քան ընդհակառակը: Լատիներէնը փոխ է առել յունարէն ոչ միայն հազարաւոր բառեր ու անուններ, այլ նոյնիսկ հնչիւնական ու քերականական ձեւեր: Անհնար է լատիներէնի տառադարձմանը մօտենալ յունարէնից անկախ դիրքերից: Հին յունարէնը այն եզակի լեզուներից է, որ մեծագոյն ազդեցութիւնն են թողել աշխարհի բազմաթիւ լեզուների վրայ: Դեռեւս Ադեքսանդր Մեծի դարաշրջանից սկսած (Ք. ա. Դ. դար) յունարէնը տարածուեց ողջ Արեւելքում, իսկ Յունաստանի հռոմէական նուաճումից սկսած (Ք. ա. Ա. դար), հին Հռոմն ու իր լեզուն՝ լատիներէնը, խորապէս ներծծուեցին յունաբանութիւններով: Աւելի ուշ, լատիներէնի համաշխարհային լեզու դառնալու հետեւանքով, լատիներէնն ու յունարէնը իրենց մեծագոյն դրոշմը դրեցին աշխարհի լեզուների մեծ մասի վրայ, եւ դժուար թէ գտնուի այսօր մի այլ լեզու, որ նման ազդեցութիւն ունեցած լինի աշխարհում:

Յաջորդ յօդուածներում անդրադառնալու ենք եւրոպական մի քանի կենդանի լեզուների՝ ֆրանսերէնի, անգլերէնի, գերմաներէնի, իտալերէնի, սլաւոնական լեզուների յատուկ անուններին: Դրանք այն լեզուներն են, որոնց տառադարձման նրբութիւնների բացը վաղուց է զգացւում մեր լեզւում: Անհնար է ուսումնասիրել այդ լեզուների տառադարձումը, առանց նախօրօք անդրադառնալու հին յունարէնին ու լատիներէնին: Եւրոպական լեզուները բազմաթիւ բառեր են փոխ առել դասական լեզուներից, եւ, նման բառերի տառադարձութեան ճանաչողական տեսքը

պահպանելու համար, անհրաժեշտ է հաշուի նստել յոժնարէն ու լատիններէն փոխառութիւնների հետ:

Յիշեցնենք, որ տառադարձութիւնը ոչ այլ ինչ է քան «յարմարագրութիւն»: Նախորդ յօդուածում արդէն ընդգծել ենք, որ մեր նիւթը գիտական գրադարձութեան մասին չէ, այլ միայն գործնական մայրենի տառադարձութեան, այն է՝ որեւէ օտար լեզուի յատուկ կամ հասարակ անունը հայերէն տառերով ձիւղ, յարմար եւ միակերպ գրելու արուեստը, եւ ոչ թէ օտար անունները տառ առ տառ գիտական հայերէնի վերածելը:

Կ'ուզենայինք նմանապէս ընթերցողին զգուշացնել, որ իրենց բազմաթիւ նմանութիւններով հանդերձ, Եւրոպայի լատինագիր ու սլաւոնագիր լեզուներն ունեն հին յոժնարէնի ու լատիններէնի ուրոյն, ամէն մէկին իրեն յատուկ տառադարձութիւն՝ հիմնուած յոժնարէնի ու լատիններէնի տարբեր ժամանակների արտասանութեան, ինչպէս նաեւ փոխառու լեզուների հնարաւորութիւնների վրայ: Հայերէնն ունի ի՛ր հնարաւորութիւններն ու իւրայատկութիւնները, եւ պէտք չէ ակնկալել, որ հայերէնը խոնարհուի եւրոպական կամ որեւէ այլ լեզուի տառադարձութեան կանոններին:

Հիմ յունարէնի եւ լատիններէնի արտասանութիւնների պատմութիւնը

Թէեւ այս երկու լեզուների արտասանութիւնների պատմութիւնը մեր յօդուածի անմիջական առարկան չէ, անհարկի հարցերից խուսափելու համար կարեւոր ենք համարում ընթերցողին համառօտաբար ծանօթացնել, թէ ինչպէս են արտասանում եւրոպացի ազգերը հին յունարէնն ու լատիններէնը:

Յունարէնի արտասանութիւնը (ինչպէս եւ ամէն լեզուի արտասանութիւն) դարերի ընթացքում փոխուել է, եւ յոյները իրենց հին (դասական) լեզուի հնչիւնները բոլոր դարերում մըշտապէս արտասանել են իրենց ժամանակակից բանաւոր յունարէնի հնչիւնների օրինակով: Դիցուք՝ «B» տառը. այն դարերում, երբ բանաւոր խօսակցական լեզուն այն արտասանել է [p]², հին

2 Յիշեցնեմք ընթերցողին, որ տառ եմքադրելիս գրում եմք չակերտների մէջ (օր.՝ «ա»), իսկ հնչիւն եմքադրելիս՝ անկիւնաւոր (ֆառակուսի) փալագծերի մէջ (օր.՝ /ա/):

յունարէնի «B»-ն նոյնպէս արտասանուել է [p]: Բայց սկսեալ այն ժամանակներից, երբ այդ տառը բանաւոր լեզուում սկսել է հնչել [վ], յոյնը հին յունարէնն էլ է հնչեցրել [վ]: Ասել է թէ՛ հին յունարէնի (որը յոյների գրաւոր լեզուն է եղել մինչեւ ԺԹ.-ի. դդ.) արտասանութիւնը եղել է նոյնը, ինչ եւ յունարէնի ընթացիկ լեզուի արտասանութիւնը: Միեւնոյն երեւոյթը տեսնում ենք եւ այսօր. յոյնը հին հունարէն հնչիւնները արտաբերում է ճիշտ այնպէս, ինչպէս նոր յունարէնի համապատասխան հնչիւնները: Զարմանալի ոչինչ չկայ, քանզի մենք՝ հայերս էլ, նոյն բանն ենք անում. հին հայերէնը (գրաբարը) արտասանում ենք ինչպէս եւ նոր հայերէնի հնչիւնները (արեւմտահայերէն կամ արեւելահայերէն արտաբերումով):

Յունարէնի արտասանութիւնը հին եւ միջին դարերի լատինախօս աշխարհում հետեւում էր յոյների արտասանութեանը. ինչպէս յոյներն էին արտասանում այս կամ այն դարում, այնպէս էլ լատինացիներն ու լատիներէնի ազդեցութեան տակ գտնուող ժողովուրդները: Իրավիճակը փոխուեց Վերածննդի դարաշրջանում, երբ իմաստասէր ու աստուածաբան Երազմոս Ռոտերդամցին (1466–1536) կասկածի տակ առաւ գոյութիւն ունեցող յունարէն (միաժամանակ եւ լատիներէն) արտասանութիւնը եւ, իր գիտելիքների սահմաններում, տուեց այդ երկու լեզուների հնարեան արտասանութիւնների նկարագրութիւնը³:

Ուստի, ԺԶ.-ԺԷ. դարերից սկսած, դպրոցական արտասանութեան պատմութիւնը Եւրոպայում (Յրանսիա, Անգլիա, Գերմանիա, Իտալիա, հետագայում նաեւ Ռուսաստան) երկու հոսանքի բաժանուեց. մէկը՝ յունաց ընթացիկ արտասանութիւնն էր, միւսը՝ Երազմոսի «գիտականը»: Երազմեան արտասանութիւնը դարերի ընթացքում ամէն ժողովուրդ յարմարեցրեց իր մայրենի լեզուի արտասանութեանը, եւ այսօր գուցէ աւելի ճիշտ կը լինի խօսել յոգնակի՝ երազմեան արտասանութիւնների մասին:

Ի. դարում լեզուաբանները հին յունարէնի արտասանութիւնը գիտական հիմքերի վրայ դրեցին (երազմեանը անճշտութիւններ ունէր), սակայն մինչեւ հիմա էլ դպրոցական ու գիտական արտասանութիւնը Եւրոպայում մնում է մեծ մասամբ երազմեանը՝ ամէն երկրում իր ազգային գունաւորումներով:

3 DES. ERASMUS ROTERODAMUS, *De recta latini graecique sermonis pronuntiatione dialogus*, Lutetia 1528.

Յունարէնի արտասանութիւնը Հայաստանում միջին դարերում նոյնն էր, ինչ եւ ընթացիկ յունականը, քանզի հայերս մըշտապէս սերտ կապերի մէջ ենք եղել յոյների հետ: Մխիթարեան դարաշրջանը շարունակեց այդ աւանդոյթը⁴, թէեւ մինչեւ ԺԸ-ԺԹ. դարերը զգալի տարբերութիւններ էին արդէն առաջացել նոր յունարէնի հնչիւնների եւ յունարէնից հայերէնին անցած բառերի արտասանութեան միջեւ: Հայերէնը պահպանել էր, եւ այժմ էլ պահպանում է, հին յունարէնի այնպիսի հնչիւններ, որոնք ո՛չ իրենք՝ յոյներն են կարողանում այլեւս արտասանել, ո՛չ էլ եւրոպացի որեւէ ժողովուրդ (օրինակ՝ [ա]-ի եւ [փ]-ի, [կ]-ի եւ [բ]-ի, [տ]-ի եւ [ք]-ի տարբերութիւնները):

Նորհրդային շրջանը բացասաբար անդադարձաւ Հայաստանում հին յունարէնի ուսուցման գործի վրայ: Դասագրքերը եւ բառարանները այլեւս ռուսերէն էին, եւ տառերի արտասանութիւնն էլ կրեց այդ ազդեցութիւնը (հին յունարէնի ռուսական դպրոցական արտասանութիւնը ոչ այլ ինչ է, քան երազմեան արտասանութեան՝ ռուսերէնին յարմարեցրած տարբերակը): Ռուս եկեղեցին շարունակում է գործածել նոր յունարէն արտասանութիւնը (թեթեւակի տարբերութիւններով), սակայն Ռուսաստանի գիտական շրջանակները նախընտրում են երազմեանը:

Մի խօսքով, այսօր աշխարհում գոյութիւն ունի, կարճ ասած, հին յունարէնի երեք տեսակի արտասանութիւն. մէկը յունաց նոր արտասանութիւնն է, երկրորդը՝ Երազմոսի՝ զանազան լեզուներին յարմարեցրած արտասանութիւնների շարքը, երրորդը՝ գիտականօրէն «վերականգնած» կոչուող, միջազգայնօրէն «յանձնարարելի», հնադարեան արտասանութիւնը:

Լատիներէնի արտասանութիւնը դարերի ընթացքում ընդհանուր առմամբ նոյն ուղին է անցել, ինչ եւ հին յունարէնինը: Լատինացիները, եւ լատիներէնի մշակութային ազդեցութեան տակ եղած ժողովուրդները, հին եւ միջին դարերում լատիներէնը արտասանել են այնպէս, ինչպէս իրենք արտասանում էին իրենց մայրենի լեզուները. իտալացիները՝ իտալերէն, ֆրանսացի-

4 Օրինակի համար տե՛ս հետեւեալ քառարանի որդեգրած հնչումը այբուբենի իւթաբանչիւր տառի տակ. Ա. եւ Ստ. Ագաբեանց, Նոր Բաղգիրք յունարէն, իտալերէն, հայերէն, տանկերէն, Մխիթարեան հրատ., Վիէննա 1848:

ները՝ ֆրանսերէն եւ այլն: Փոխուում էր իտալերէնի ու ֆրանսերէնի ընթացիկ արտասանութիւնը, գուգահեռաբար փոխուում էր եւ «մեռած» լատիններէնի արտասանութիւնը:

Երազմոս Ռոտերդամցու դիտողութիւնները դիպան եւ լատիններէնին: Ժ.Զ. դարից, դանդաղօրէն, լատիններէնի դպրոցական արտասանութիւնները սկսեցին իրենց տեղը զիջել այդ նոր՝ երազմեան «գիտական» արտասանութեանը (տարբեր երկրներում՝ տարբեր արագութեամբ):

Խորհրդային տարիներին լատիններէնի արտասանութիւնը Հայաստանում եւս կրեց ռուսական դպրոցի ազդեցութիւնը, եւ նոյնիսկ այսօր հայերէնը դժուարութեամբ է ազատուում անցանկալի այդ բեռից:

Այսօր աշխարհում շրջանառութեան մէջ է դասական լատիններէնի գլխաւորապէս երկու արտասանութիւն (եթէ մոռանանք դրանց մի քանի տասնեակ տարազանութիւնները). մէկը՝ արդի գիտական, «վերականգնած» կոչուող, միջազգայնօրէն «յանձնարարելի» արտասանութիւնն է⁵, միւսը՝ լատինածէս եկեղեցիների ժամասացութեան արտասանութիւնը: Ինչպէս եւ յունարէնի պարագայում, երկուսն էլ ունեն իրենց կողմնակիցներն ու հակառակորդները:

Այսու ամենայնիւ, մեր յօդուածը նուիրուած է ոչ թէ հին յունարէնի ու լատիններէնի արտասանութիւններին, այլ հին յունարէնից ու լատիններէնից կատարած հայերէն փոխառութիւնների տառադարձութեանը: Մի բան է՝ որեւէ օտար լեզուի դպրոցական կամ գիտական արտասանութիւնը, մէկ այլ բան՝ այդ լեզուից փոխառեալ անունների տառադարձումը: Տառադարձութիւնը, ինչպէս առիթ ենք ունեցել նշելու, ունի իր աւանդույթները, եւ դրանք անհրաժեշտաբար նոյնը չեն, ինչ որ օտար լեզուների ժամանակակից կամ «վերականգնած» արտասանութիւնները:

5 Ֆրանսիայի Աւինիոն քաղաքում 1956 թ. սեպտեմբերին կայացած Կենդանի լատիներէնի միջազգային գիտաժողովի (Congrès International pour le latin vivant) որոշմամբ՝ «վերականգնած արտասանութիւնը» ընդհանուր ընդունելութիւն գտաւ: Տե՛ս օրինակ՝ Revue de la Franco-Ancienne (Bulletin de la Société des Professeurs de français et de langues anciennes de l'enseignement secondaire et de l'enseignement supérieur publics), n° 119, Paris, novembre 1956, p. 224:

Հայերէն տառադարձութեան հնչիւնական սկզբունքները

Ինչպէս արդէն նշել ենք յօդուածաշարքիս Ա. մասում, ինչպիսիքն էլ լինեն տառադարձութեան սկզբունքներն ու եղանակները, Հայերէն տառերով գրած հնչիւններն ու հնչիւնակապակցութիւնները խորթ պիտի չլինեն Հայի լսողութեանը եւ չհակասեն Հայերէնի հնչիւնական օրէնքներին: Տառադարձումը պէտք է կատարել միայն գրական Հայերէն հնչիւններով, որքան էլ արդիւնքում ստացուող արտասանութիւնը հեռու լինի փոխատու լեզուի արտասանութիւնից: Իրօք, տառադարձութեան արուեստում ոչ այնքան փոխատու լեզուի հնչիւններին հարազատ մնալն է կարեւոր, որքան փոխառու լեզուին ծառայելը: Հայի համար աւելի կարեւոր է, որ անունը բարեհունչ լինի հենց Հայերէնում, ուստի անհրաժեշտ է, որ բառի Հայատառ հնչողութիւնը յարմար գայ գրական Հայերէնի գրութեանն ու արտասանութեանը:

Ստորեւ՝ Հայերէնի հնչիւնաբանութեան եւ ուղղագրութեան մի քանի սկզբունքային կէտեր, որոնք անհրաժեշտ է յարգել, մասնաւորապէս՝ հին յունարէնից ու լատիներէնից կատարած տառադարձութեան ժամանակ: Հայերէնն ունի հին յունարէնի ու լատիներէնի իր՝ աւանդական, տառադարձութիւնը, եւ այն յարգելը պատշաճ է իւրաքանչիւր գիտական կամ հանրամատչելի գրականութեան համար:

ա) Ինչպէս լեզուաբաններն են ենթադրում (որը տրամաբանօրէն ընդունելի է)՝ Հայերէնի «ե» եւ «է» տառերը Ե. դարում տարբեր հնչում ունէին: Այսօր սակայն դրանք արտասանում ենք միեւնոյն կերպ՝ լատիներէն API [e]⁶ հնչիւնի նման: Միայն բառակցքին՝ եչ տառը, բացի իր մաքուր [ե] (API [e]) հնչումից, ունի նաեւ [յե] հնչում (API [je]):

Վերջին դիտողութիւնը վերաբերում է գերազանցապէս մեր գրաւոր լեզուին (երկօքին ճիւղերին): Մինչդեռ Հայերէն գրեթէ բոլոր խոշոր բարբառները բառակցքի եջերը [ե/է] (այսինքն՝ առանց [յ]–ի յաւելումի) են արտասանում եչով սկսող գործածա-

6 Այսուհետեւ, ամփոփաւոր փակագծերի մէջ քերած լատիներէն տառերով արտասանութիւնը (աւելի հասկանալի լինելու համար) նախորդելու ենք «API» յապաւումով: API-ն (Association Phonétique Internationale) Հրմշիւմաքանութեան Միջազգային Ընկերութեան որդեգրած հնչական «այբուրենն» է:

կան արմատների կէտում⁷, գրական լեզուի երկու ճիւղերի դըպրոցներն էլ բառասկզբի եչերը սերնդէ սերունդ ուսուցանում են ուսանողին դրանք [յե] հնչեցնել: Այսինքն՝ դպրոցը արմատների կէսի կենդանի արտասանութիւնը մեքենայաբար պարտադրել է միւս կէսի կենդանի արտասանութեանը: Օրինակ՝ հայերէնի բոլոր խոշոր բարբառները (Այրարատ, Կոստանդնուպոլիս, Կարին, Վասպուրական, Տուրուբերան, Արցախ, Տփղիս, Խարբերդ, Սեբաստիա, Աղձնիք...) «երկու» բառը [ե/է]-ով են արտասանում⁸, սակայն գրական լեզուները դասականից ունենում են [յե]-ով արտասանութիւն:

Արդ, ե՞րբ եւ ո՞վ է որոշել, որ բառասկզբի բոլոր եչերը պէտք է գրաւոր լեզուում [յե] արտասանել: Ի՞նչ դպիրներ, վարժապետներ, ո՞ր դպրոցներում եւ ո՞ր դարերում որոշեցին, որ գրական լեզուում պէտք է [յե] արտասանութիւնը տարածել այդ բոլոր բառերի վրայ: Հեղինակիս անյայտ է որեւէ աշխատութիւն, որը ուսումնասիրած լինի գրական լեզուի արտասանութեան այդ պատմութիւնը⁹: Մեզ մնում է միայն ենթադրել, որ ինչ-ինչ դարերում, ուսուցիչ վարժապետները, ելնելով հայերէն արմատների մի մասի մէջ (օր.՝ «եւ, եզ, եռ, երգ» արմատների մէջ) եչի [յե] արտասանութեան փաստից, անգիտակցաբար եւ աստիճանաբար տարածել են այն հայերէն բոլոր արմատների վրայ, համարելով թէ դա է ճիշտ եւ կիրթ արտասանութիւնը: Եւ այսօր էլ, երբ գաւառացի բարբառախօս աշակերտը դպրոց է գնում, նրա բնական եւ ճիշտ [երկու] արտասանութիւնը ուսուցիչը փոխում է [յերկու]-ի: Այդպէս է նաեւ, որ «եպիսկոպոս» բառի բնական [էպիսկոպոս, ἐπίσκοπος] արտասանութիւնը փոխել ենք [յեպիսկոպոս]-ի, կամ «երեւան» տեղանունն աւանդական ճիշտ արտասանութիւնը դարձրել [յերեւան]:

7 Տե՛ս ԱՃԱՌԵԱՆ Հ., Հայերէն արմատական բառարան, Ա.-Դ. Հատորներ, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան 1971–79, «Ե» տառով սկընող բոլոր բառերի բարբառային արտայայտութիւնները:

8 Տե՛ս ԱՃԱՌԵԱՆ Հ., Հայերէն արմատական բառարան, «երկու» բառի տակ:

9 Սիրաբ Գիլյուրդադեանի եւ Սերոբ Ղազարեանի բազմաթէ՛ք աշխատութիւնները հարցին այդ տեսակետից չեն անդրադառնում: ԳՅՈՒԼՐՈՒԴԱՂԵԱՆ Ս. Վ., Հայերէնի ուղղագրութեան պատմութիւն, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան 1973: ՂԱԶԱՐԵԱՆ Ս., Հայոց լեզուի համառոտ պատմութիւն, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան 2006:

Մեր այսօրուայ խնդրին հետեւելով, գտնում ենք, որ հայերէնի ուղղագրական-ուղղախօսական օրէնքը ճիշտ կը լինէր հետեւեալ կերպ ձեւակերպել: Ոչ թէ դասականորէն թէ՛ բառասկզբում գրում ենք «եչ», կարդում [յե], այլ պէտք է ուսուցանել՝ որոշ բառերի սկզբում լսում ենք [յե], բայց գրում ենք «եչ» (առանց «յի»-ի): Սակայն դա չի նշանակում, թէ բառասկզբի բոլոր եչերը [յե] պիտի կարդանք:

Եչի բառասկզբի [յե] արտասանութիւնը, ուստի, պատմական զարգացման հետեւանք է, հայերէնի ներքին օրէնք (այն էլ ոչ բոլոր բառերին յատուկ), եւ ոչ մի անհրաժեշտութիւն չկայ այն տարածելու փոխառեալ բոլոր օտար անունների վրայ: Դա մասնաւորապէս կարեւոր է հին յունարէն եւ լատիններէն անունների վերաբերեալ: Հայերէն ականդական տառադարձումը բառասկզբում միշտ գրում է «ե» եւ ոչ՝ «է»: Այդ եչերը պարտադիր [յե] արտասանութիւնը չունեն: Ընդհակառակը, նրանց մեծամասնութիւնը պէտք է [ե] (API [e]) արտասանել, եւ միայն վաղուց հայացած եւ արմատացած արտասանութիւնները [յե]-ով հնչեցնել: Օրինակ՝ «Երուսաղէմ, Եգիպտոս» արտասանում ենք [յե]-ով, սակայն «Եգէական» կամ «Եմէական» ցանկալի է արտասանել առանց [յ]-ի:

Հարկաւոր է հայ դպրոցներում նշել այդ փաստը եւ օտար փոխառութիւններում եւ տառադարձած անուններում տարբերել, թէ եչը երբ է պարզ ձայնաւոր, երբ՝ երկհնչիւն:

Ինչ վերաբերում է ուղղագրութեանը, «ե»-ը կարող է գրուել բառասկզբին եւ բառամիջում, բայց ոչ երբեք բառավերջին: «է»-ն կարող է գրուել միայն երեք դիրքում. ա) ծայրագոյն բառավերջին (քաղէ, արիւն, մարգարէ, Վահէ, գրէ, հնչէ...), բ) բառի վերջին վանկում, միայն մէկ բաղաձայնից առաջ (շեշտակորոյս լինելիս տալիս է «է/ի», հագուադէպ՝ «է/ն» հնչիւնափոխութիւն) (պարտէզ, հրաւեր, պատուեր, աղուէս, Մովսէս...), գ) բառամիջում՝ ձայնաւորից առաջ (հրէից, քրիստոնէութիւն): Այսինքն՝ «է» տառը բառասկզբին չի հանդիպում (եթէ մի այլ ձայնաւորից առաջ չի ընկած՝ էած, էանց, էական...): «է, էք, էր, էջ, էշ, էգ, էմբ...» բառերում «է»-ի առկայութեան պատճառը ոչ թէ բառասկիզբն է, այլ բառի վերջին վանկում գտնուելու հանգամանքը:

Հետեւաբար, տառադարձութեան ժամանակ ընդհանրապէս, եւ առաւել եւս՝ հին յունարէն ու լատիններէն, արդէն ականդական դարձած անունների մէջ, պէտք է հաշուի առնել վերոնշեալ

բոլոր հանգամանքները: Ուստի՝ օրինակների եւ ամփոփիչ աղիւսակի մէջ գրելու ենք «ե/է», որը կը նշանակէ թէ տառադարձութիւնը կատարուելու է կա՛մ «ե»-ի, կա՛մ «է»-ի (համապատասխան նշած ուղղագրական կանոնների): Բառասկզբի [ե] կամ [յե] արտասանութիւնը մնում է ընթերցողի հայեցողութեանը. եթէ բառը աւանդական հաստատուած արտասանութիւն ունի, այդ արտասանութիւնը գերադասելի է: Եթէ բառը չունի աւանդական արտասանութիւն, այն գերադասելի է արտասանել առանց [յ]-ի յաւելումի:

Սրանով հաստատում ենք գրաւոր լեզուի գերակայութիւնը բանաւոր լեզուի վրայ: Գրաւոր լեզուն, բանաւորի համեմատ, ոչ միայն շատ աւելի տեղեկութիւն է պարունակում ու տարածում, այլեւ հարկւրամեակների պատմութիւն ունի (մինչդեռ բանաւորը հազիւ մի դար է ինչ հնարաւոր է ձայնագրել): Եթէ բանաւոր լեզուում կարեւորը ականջն է, գրաւոր լեզուում կարեւորը աչքն է, եւ պատկերի ուժը թելադրում է, որ գրութեա՛ն ձեւը լինի առաջնայինը:

Բ) Նոյն մտահոգութիւնները պէտք է արտայայտենք «ո» տառի առթիւ: Յունարէնի ու լատիներէնի [o] հնչիւնը հայերէնում ի սկզբանէ արտայայտուել է «ո» տառով, որը մեսրոպեան այբուբենի միակ [ո]¹⁰ հնչիւնն էր:

«Ո» տառը, դարերի ընթացքում, շատ բառերի սկզբում սկսել է արտասանուել [վո]: Կան բացառութիւններ, իսկ «վ»-ից առաջ «ո»-ն միշտ պահում է իր մաքուր հնչումը. ով, ովկիանոս, Ովիդիոս, Ովրատիոս:

Այս դէպքում էլ, հայերէնի ուղղագրական-ուղղախօսական օրէնքը ճիշտ կը լինէր դպրոցներում ձեւակերպել հետեւեալ կերպ: Ոչ թէ դասաւանդել թէ՛ բառասկզբին գրում ենք «ո», կարդում [վո], այլ պէտք է ուսուցանել՝ շատ բառերի սկզբում լսում ենք [վո], բայց գրում ենք «ո» (առանց «վ»-ի) (ունենք բացառութիւն՝ վոհմակ): Եւ դա չի նշանակում, թէ բառասկզբի բոլոր «ո»-երը պէտք է [վո] կարդանք¹¹:

10 Ընդգծեմք, որ հնչիւն արտայայտելու համար նշանակում ենք [ո], որ համապատասխան է API [o] հնչիւնին:

11 Ի դէպ, կարծում ենք Թերեւս անտեղին է այբուբենում «ո» տառին «վո» անունը տալ: Ճիշտ կը լինէր այն կոչել API [o]։

կրկին, ինչպէս եւ «ե»-ի դէպքում, այս արտասանութիւնը հայերէնի ներքին մի օրէնք է, եւ ոչ մի անհրաժեշտութիւն չկայ այն տարածելու փոխառեալ օտար բոլոր անունների վրայ: Այսինքն՝ եթէ օտար անունների բառակցքին գրում ենք «ն», պարտաւոր չենք այն կարդալ [վն]: Օտար փոխառութիւնների մէջ [վն] հնչումի դէպքում «վ» տառը անպատճառ յաւելում ենք. վոլտ (էլեկտրաշարժիչ ուժի միավոր), վոլֆրամ (մետաղ), նմանապէս օտար անունների մէջ՝ վոլտեր, վոլտա, վոգեսոս, վորմս, վոլգա: Տրամաբանութիւնը յուշում է, որ եթէ վոլգա գետի անունը գրում ենք «վն»-ով, առանց «վ»-ի գրութիւնը՝ «Ոլգա», համապատասխան է Olga անունին:

Հին յունարէնի եւ լատինարէնի պարագայում առաւել եւս, օտար [օ]-ի միակ համարժէքը հայերէն «ն» տառն է: Յետմեսորպեան կլոր «օ» փոխառեալ տառը մեր ողջ պատմութեան ընթացքում, ընդհուպ մինչեւ ԺԹ.-ի դարերը, երբէք չի գործածուել հին յունարէն ու լատինարէն անունները տառադարձելու համար:

Արտասանութեան տեսանկիւնից նայելով նշենք, որ աւանդաբար [վն] արտասանուող անունները բնականաբար պահելու են իրենց [վն] արտասանութիւնը (Պդիսես...), իսկ անկայուն արտասանութիւն ունեցող քիչ յայտնի անունների համար նախընտրելի է մէկընդմիջտ որդեգրել պարզ [ն] արտասանութիւնը (Ոկտաւիանոս, Որեստէս, Որոնտէս, Որփէտոս):

Ինչպէս եւ եչի պարագայում, հարկաւոր է օտար փոխառութիւններում եւ տառադարձ անուններում տարբերել, թէ «ն»-ն բառակցքին երբ է պարզ ձայնաւոր, երբ՝ երկհնչիւն:

Ինչ վերաբերում է յունարէնից կամ լատինարէնից փոխառած հայերէն կլոր «օ» տառին, որը «աւ» երկբարբառի ուշ արտասանութեան գրային տարբերակն է, կրկին կարծում ենք, որ արդարացի չէր լինի ընդլայնել նրա գործածութիւնը: Ուստի՝ օտար բոլոր «օ»-երը ճիշտ կը լինի արտայայտել հայերէն «ն»-ով, հայերէն կլոր «օ»-ն թողնելով միայն որպէս «աւ»-ի տարբերակ, օր.¹² Օգոստոս, Պոդոս, Մօրիկ¹²:

12 Նոյն կարծիքին է մտել Լուսինէ Աւետիսեանը: Տե՛ս նրա *Նրբ յայտածում է մաշտոցեան տրամաբանութիւնը*, Երևան 2018, 26-27: Խօսքը այստեղ քնակամարար «աւ» երկբարբառի մախարադայն API [օ] ար-

դ) Հայերէնում բաղաձայնին չի կարող հետեւել «յ» տառը (բարդութիւնները չհաշուած): Այդ պատճառով հայերէնը օտար «ia, ie, ii, io, iu» համակցութիւնները արտայայտում է «ի» ձայնաւորի միջոցով. «իա, իե/իէ, (ի)¹³, իո, իու»: Սա ճիշտ տառադարձութեան սիւներից մէկն է:

Բառակցքին, սակայն, կարող ենք եւ իսկապէս գրում ենք «յա, յե, յի, յո, յու»:

Ստորի աղիւսակը ամփոփում է այդ երկու դէպքերը:

Ձայնաւորներ՝	ա	ե/է	ի	ո	ու
Բառակցքին	յա	յե	յի	յո	յու
Բաղաձայնից յետոյ	իա	իե/իէ	ի	իո	իու

Հայերէնի «եա» երկբարբառը (եւ դրանից բարդուած՝ «եաւ/եօ» եռաբարբառը) յունալատինական տառադարձութիւնների մէջ չենք գործածում:

Բառակցքի «յ»-ն արդէ հայերէն բազմաթիւ բառերում արտասանում ենք [h]: Հայերէն բառերի հետ մէկտեղ, ժամանակի ընթացքում, որոշակի թուով օտար անուններ նոյնպէս սկսեցինք արտասանել [h]-ով. Յակոբ, Յովհաննէս, Յունաստան: Սակայն, ինչպէս եւ «ե»-ի եւ «ո»-ի պարագաներում, դա հայերէնի ներքին օրէնքն է. հայերէնի այս ձեւափոխ (հնչիւնափոխ) արտասանութիւնը յատուկ է միայն հայերէն (կամ վաղուց արդէն հայացած) բառերին, եւ անհրաժեշտութիւն չկայ այն տարածելու նոր փոխառեալ օտար անունների վրայ: Լատիներէն IUPPITER (Jupiter) անունը հայերէն տալիս է «Յուպիտեր»¹⁴ եւ այն այդպէս էլ պէտք է արտասանել՝ [յուպիտեր], եւ ոչ՝ [հուպիտեր]: Ստ. Մալխասեանցի բառարանը 1940-ական թթ. արդէն բերում էր օտար բառերի օրինակներ, որոնք որդեգրել են աւանդական ճիշտ տառադարձութիւնը («յի» տառով) եւ տրամաբանական ճիշտ արտասանութիւնը (նոյնպէս [յ]-ով)¹⁵:

տասանութեան մասին է (իմչպէս՝ «օր, տօն» եւ այլն). «աւ»-ի [աւ] արտասանութեան դէպքում միշտ գրում ենք «աւ» (նաւ, հաւ, քնաւ ...):

13 Կրկնակ «իի»-ն պարզում է:

14 Միայն եւ «Յուպիտեր» եւ «Իւպիտեր» տառադարձութիւնները: Այս կէտին կ'անդրադառնանք յաջորդ յօդուածներում:

15 Տե՛ս յագուար, յամբ, յամենակամութիւն բառերը: ՄԱԼԽԱՍԵԱՆՑ Ա., Հայերէն բացատրական բառարան, Երեւան 1944–1945:

Ամփոփենք. եթէ «յի» տառով սկսող անունը ունի իր աւանդական [h]-ով արտասանութիւնը, այն շարունակում ենք արտասանել ինչպէս սովոր ենք: Եթէ «յի» տառով սկսող օտար անունը նոր փոխառութիւն կամ նոր տառադարձութիւն է, կամ չունի իր հաստատուած աւանդական արտասանութիւնը, գերադասում ենք [j]-ով արտասանութիւն. օրինակ՝ «Յունաստան»-ը դարեր ի վեր հնչում է [h]-ով, սակայն արգոնաւորդներ ռուջ-նորդի անունը՝ «Յասուն» պէտք է հնչեցնենք [յասուն] եւ ոչ [հասուն]:

դ) Տառադարձութիւնների մէջ հայերէն «ր» եւ «ռ» տառերն իրար լրացնում են: Սկզբունքօրէն ամենուր գրում ենք «ր» եւ միայն բառասկզբին այն փոխարինում ենք «ռ»-ով:

Այստեղ պէտք է կանգ առնենք մի վիճելի կէտի վրայ: Հայագէտ լեզուաբանների մեծ մասը համոզուած է, որ հին հայերէնում «ն»-ին նախորդող API [r]-ն [n] էր հնչում ու «ռ» գրում (դուռն, գառն, ձեռն, բեռն, առն, ձմեռն, ամառն, բառնալ, դառնալ եւ այլն): Եթէ հնչիւնափոխութեան հետեւանքով «ռ»-ին այլ հնչիւն է յաջորդում, փոխում է «ր»-ի (առնեմ – արարի¹⁶, առն – արակամ, բառնալ – բարձի, դառնալ – դարձի, ձեռն – ձեքքազատ, ձմեռն – ձմերան, ամառն – ամարան, դուռն – դրումբ եւ այլն): Ըստ լեզուաբանների՝ «ն»-ին կարող էր «ր» նախորդել եթէ՛ ա) այդ «ն»-ն յօդ է, քանի որ այդ դէպքում երկուսի միջեւ [ը] է լսւում (սարն, քարն, բարն, դարն, ջուրն, մուրն), բ) հնչիւնափոխութեան հետեւանքով է «ն»-ն յաջորդել «ր»-ին (գարուն, գարնան)¹⁷:

Կարծում ենք՝ այս կէտը վիճելի է: Նախ՝ եթէ «սարն» բառը հնչում է [սարըն], «գառն» բառն էլ է հնչում [գառըն], եթէ ունենք «գարուն/գարնան» հնչիւնափոխութիւն, ապա «դառն/դրումբ»-ը նոյնպէս հնչիւնափոխութիւն է: Գիւլբուղաղեանի բերած այդ փաստարկները չեն համոզում: Երկրորդ, եթէ ինչ-ինչ դէպքերում «ն»-ին կարող է «ր» նախորդել, ապա հնչիւնային կանոնը այլեւս

16 Անցեալ կատարեալը «ար» արմատի կրկնութեամբ է կազմուած:

17 Տե՛ս ԳԻՒԼԲՈՒԳԱՂԵԱՆ, անդ, էջ 15: Հմմտ. ԱՃԱՌԵԱՆ Հ., *Լիակատար Բերականութիւն հայոց լեզուի*, Զ. Զայնագիտութիւն, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան 1971; էջ 653: Անտեանն աւելացնում է, որ «չկայ հայերէն բառ, ուր գտնուի «րն» խումբը. բոլոր օտար բառերում էլ «րն» դառնում են «ռն» (անդ):

բացարձակ չէ: Իրօք, «դատաւոր-ն, քագաւոր-ն» յօդաւոր հարիւրաւոր բառերը գալիս են տակաւին Ե. դարից: Դրանց կողքին ունենք նաեւ, օրինակ՝ «կարիմ / կարմոյ, վերիմ / վերմոյ, ստորիմ / ստորմոյ» հոլովուածները, «կորնչիմ, յարնչիմ» բայերը, աւելի ուշ շրջանի «դատաւոր-նեք, քագաւոր-նեք» հարիւրաւոր յօդանակիները, «վերնագոյն» ձեւի բարդութիւններ, «կորնթոս» փոխառութիւնը եւ այլն:

Ակնյայտ է, որ «ն/ր» հերթագայութիւնը նախազրային շրջանի մնացուկ է, եւ այն Ե. դարում արդէն քարացած օրէնք էր: Նոր բառերը այլեւս չէին ենթարկուում այդ կանոնին:

Այդ ամէնից ելնելով՝ կարծում ենք, որ կարիք չկայ (տառադարձութեան մասին է խօսքը) «ն»-ից առաջ ընկած «ն/ր»-ի ուղղագրութեան կանոններ «յօրիմել»: Ինչպէս տեսնում ենք, հայի ականջը «ն»-ից առաջ կատարելապէս ընդունում է ե՛ւ [ն], ե՛ւ [ր] հնչիւնները, ինչ պատճառներով էլ որ «ր» տառը «ն»-ից առաջ ընկած լինի:

Այնուամենայնիւ, հին յունարէն տառադարձութիւնների մէջ, որոնք Ե. եւ հետագայ դարերի արտասանութեան դրոշմն են կրում, առաւելապէս հանդիպում ենք «ուն» կապակցութեան. «Հոդոփեռնէս, Հալիկառնասոս, Պառնաս(ոս), Զմիւռնիա»: Եւ քանի որ յունալատինական փոխառութիւնների աւանդոյթը գալիս է հին ժամանակներից, մենք այսօր պարտաւոր ենք յարգել այդ կանոնները:

ե) «Ղ» եւ «լ» տառերի գործածութեան մասին պէտք է գիտենալ հետեւեալը: Ե.-Ը. դարերում «ղ» տառը [լ] հնչիւնի թաւ տարբերակն էր: Գծագրական առումով, երկաթագիր «ռն-չաւոր» դատը («Ղ») լիւնի («Լ») փաստօրէն ածանցեալն է¹⁸: Ղատը մեր այբուբենում զբաղեցնում է յունարէն «Λ»-ի կամ լատիներէն «L»-ի դիրքը, ասել է թէ՛ հները օտար այդ հնչիւնները աւելի նմանեցնում էին հայերէն ոսկեդարեան [ղ] (թաւ [լ]) հնչիւնին: Ղատը ներկայ է աւանդական տառադարձութեան բազմաթիւ անուններում. Ղուկաս, Ղազար, Ղեռնդ, Երուսաղէմ, Պաղոս, Ղեւի: Սակայն ունենք նաեւ լիւնով տառադարձումներ. Լեւոն, Լատին, Լակեղեմոն, Լիբիա, Լաւոդիկէ, Գաբրիէլ, Սամուէլ:

18 «Լիւն»-ի գլխիմ «ունչ» աւելացնելով է յօրինած մեսրոպեան «Ղատ»-ը:

Աւանդաբար մեզ հասած անունները յարգելով հանդերձ, կարծում ենք հարկ չկայ այլեւս օտար [լ] հնչիւնը շարունակել գրել «ղ»-ով, քանզի այսօրուայ հայը հայերէն այդ տառին բոլորովին այլ հնչում է տալիս: Այնուամենայնիւ, այնտեղ ուր հնարաւոր է, կարող ենք զուգահեռաբար գործածել «ղ»-ով եւ «լ»-ով գրութիւնները. օրինակ՝ Պղատոն / Պլատոն, Ապոդոն / Ապոլոն, Սոդոն / Սոլոն:

զ) Յօդուածաշարքիս Ա. մասում արդէն անդրադարձել ենք հայերէն երկբարբառների ու եռաբարբառների տառադարձական սկզբունքներին¹⁹: Հին յունարէնի ու լատիներէնի տառադարձութեան ժամանակ առաւել եւս կարեւոր է յարգել հայերէնի երկբարբառների ու եռաբարբառների գրութեան կանոնները:

Տառադարձման կանոններ եւ նրբութիւններ

Ստորեւ անդրադառնում ենք հին յունարէն եւ լատիներէն տառադարձութեան մի քանի նրբութիւնների, որոնք առ այսօր թերի իմացութեան առարկայ են, եւ փաստօրէն երբեմն անտեսուած գիտական ու, մասնաւորապէս, հայագիտական գործերի զգալի մասում: Որդեգրածս տառադարձումը հիմնուած է աւանդական, բայց առաւել՝ դասական հայերէնի պատմականօրէն կանոնարկուած սկզբունքների վրայ, որը եւ Հայաստանի ու Սփիւռքի գրական ու գիտական զանազան շրջանակների հայկաբան տառադարձումն է:

ա) Հին յունարէնի պայթական բաղաձայնների եռաստիճան կարգը յունարէն-հայերէն ճիշտ տառադարձութեան հիմնաքարն է: Ինչպէս դասական հայերէնի (նաեւ գրական արեւելահայերէնի, վրացերէնի կամ կովկասեան բազմաթիւ լեզուների) բաղաձայնների մի զգալի մասն է եռաստիճան (ձայնեղներ, պարզ խուլեր, շնչեղ խուլեր), այնպէս եւ հին յունարէնի պայթականները եռաստիճան են: Լատիներէնը, որի բաղաձայնները երկաստիճան էին, հին յունարէնի շնչեղ խուլերը արտայայտում էր լատիներէն «H» տառի յաւելումով, ինչպէս՝ յուն.՝ «Π» – լատ.՝ «P», իսկ յուն.՝ «Φ» – լատ.՝ «PH»: Ստորեւ բերած աղիւսակը պարզորոշ ցոյց է տալիս այդ վիճակը:

		հին յունարեմ	լատիններեմ	հայերեմ
շրթնային	ձայնել	B β	B b	Բ ք
	պարզ խուլ	Π π	P p	Պ պ
	շնչել խուլ	Φ φ	PH ph	Փ փ
փային	ձայնել	Γ γ	G g	Գ գ
	պարզ խուլ	K κ	C c	Կ կ
	շնչել խուլ	X χ	CH ch	Ք ք
ատամնային	ձայնել	Δ δ	D d	Դ դ
	պարզ խուլ	T τ	T t	Տ տ
	շնչել խուլ	Θ θ	TH th	Թ ք

Դասական հայերէնի աւանդական հնչիւնակարգը յարգում է տառադարձութեան առանցքային այս սկզբունքը:

Ժամանակի ընթացքում, սակայն, յունարէն «Φ» տառը սկըսեց արտասանուել [ֆ], «X» տառը՝ [խ], «Θ» տառը՝ միջատամնային API [θ] (ինչպէս անգլերէն theatre բառի [th]-ն է): Միջնադարեան լատիններէնը հետեւեց այդ արտասանութեանը (որքան որ կարողացաւ), եւ եւրոպական լեզուներն էլ՝ իրենց կարգին: Այժմ ֆրանսացիներն այդ տառերը կարդում են համապատասխանաբար API [f], [k], [t], անգլիացիները՝ [f], [k^h], [θ], գերմանացիները՝ [f], [x/ç], [t^h], ռուսները՝ [f], [x/ç], [f կամ t], համաձայն իրենց լեզուների հնարաւորութիւններին:

Հայերէնը մի ժամանակ մասնակիորէն անցաւ այդ նոր կարգին, սակայն հնչիւնաբանորէն ճիշտ եւ ցանկալի է, որ տառադարձութիւնը հետեւի մեր աւանդական եռաստիճան համապարգին: Օրինակներ. Βυζάντιον Բիզանդիոն, Περικλῆς Պերիկլէս, Φίλιππος Փիլիպպոս, Γοργίας Գորգիաս, Κόρινθος Կորինթոս, Χαλκηδών Քալքիդոն, Δαμοκλῆς Դամոկլէս, Ταῦρος Տաւրոս, Θουκυδίδης Թուկիդիդէս:

Ճիշտ չէ լեզուաբան շրջանակներում երբեմն պատուող կարծիքը, թէ իբր հին հայերէնը չունէր «ֆ» տառ, դրա համար էլ յունարէն «Φ»-երը հայերէն տառադարձում էր «փ»-ով: Հին յունարէնը ինքը չունէր «Φ» տառ (եւ հնչիւն), եւ բնական էր, որ յունարէն [փ] հնչիւնը հայերը գրէին «փ»: Ինչ վերաբերում է օտար [ֆ] հնչիւնին (օր․՝ ասորերէնի, պարթեւերէնի կամ պարս-

կերէնի), ապա նախագրային հայերէնում այն «h» կամ «պ» է դարձել: Ուստի՝ հին յունարէն բոլոր «Φφ»-երը անհրաժեշտ է տառադարձել հայերէն «Փփ»-ով:

բ) Կիլիկեան հայերէնից աւանդուած «Ֆ» տառի գծագիրը գալիս է լատիներէն «F» մեծատառի արագագիր հայեւային պատկերից (համակարգչի ունիկոդ կոչուած գրակարգը չունի այդ տառաձեւը): Տրամաբանական է, որ լատիներէն «F» տառը հայերէն տառադարձենք հենց «Փ»-ով: Այստեղ մեր տարաձայնութիւնն ենք գուցէ արտայայտում հայագէտների մի մասի կարծիքի դէմ, որը գտնում է թէ օտար բոլոր անունները պէտք է տառադարձել մեր «փ» տառով: Կարծում ենք, որ մի կողմից՝ դա կը բերի «Փ» տառի գոյութեան ժխտմանը (որն արդէն քանի դար է ինչ մեր այբուբենում է), միւս կողմից՝ դժուար կը լինի հայ հասարակութեանը հարկադրել հրաժարուելու այդ հնչիւնից, մանաւանդ որ այն ճշտիւ համապատասխանում է լատիներէն «F»-ին (ե՛ւ հնչմամբ, ե՛ւ գրութեամբ, ե՛ւ ստուգաբանութեամբ): Ուստի առաջարկում եմ լատիներէն «F» տառը չփոխարինել հայերէն «Փփ»-ով: Օրինակ՝ Florianus Ֆլորիանոս, եւ ոչ թէ՝ Փլորիանոս, կամ՝ Franciscus Ֆրանկիսկոս:

գ) Եունարէն երկահնչիւն «Ψψ», «Ξξ» եւ «Ζζ» բաղաձայնները, որ առաջացել են պայթական բաղաձայնների եւ յունարէն [σ] հնչիւնի միաձուլումից, հայերէն ընդունուած է տառադարձել համապատասխանաբար «փս», «փս», «զ» (հազուադէպ՝ «ձ»): Ուշադրութիւն պէտք է դարձնել հայերէնի երկու շնչեղ բաղաձայնների ընտրութեան վրայ («փ» եւ «ֆ»): Թէեւ յունարէն տառերի կենդանի արտասանութիւնը կարող է ե՛ւ «փս»-ի / «փս»-ի տեղ անցնել, ե՛ւ «պս»-ի / «կս»-ի, հայերէն պատմական տառադարձութիւնը դրանք միանշանակ որակել է «փս» եւ «փս»: Օրինակ՝ Ἀψυρτος Ափսիրտոս, Ξεφξης Քսերքսէս:

«Ζζ» տառը հին յունարէն նախ արտասանուել է [ά], եւ լատինացիները, փոխ առնելով նոյն տառը, այն օգտագործել են հենց այդ նպատակով (ինչպէս եւ արդի իտալերէնը, ուր «Ζ» տառի հնարաւոր երկու արտասանութիւններից մէկը [ά] է): Սակայն հայոց գրերի գիւտի դարում արդէն յունարէն գետան կորցրել կամ կորցնում էր իր նախկին այդ արժէքը եւ սկսում էր արտասանուել [q]: Այդ է պատճառը, որ հայերէնի պատմա-

կան տառադարձութիւնը այն ներկայացնում է «Ջ» տառով: Օր.¹ Ζεύς Զեւս (եւ ոչ թէ Զեւս), կամ Ζήνων Զննոն:

դ) Ըստ յունարէնի ուղղագրութեան՝ «Γγ» տառը քմայիններից առաջ (այսինքն՝ γγ, γκ, γλ γξ դիրքերում) արտայայտում է հայերէն ռնգային [ɣ] հնչիւնը (API [ɣ], ինչպէս «անկում» բառի միջի «ն»-ն): Լատիններէնն ու հայերէնը դա տառադարձում են միատեսակ՝ «N/ն»: Հետեւաբար, յունարէնի նշեալ տառակապակցութիւնները գրում ենք «նգ», «նկ», «նֆ», «նֆս», որտեղ հայերէն «ն» տառը նոյնպէս ռնգային հնչում ունի: Օրինակներ. Σφίγξ Սփիմֆս, Ἀγαθάγγελος Ագաթամգեղոս, Ἀρχισῆς Ամֆիսէ:

ե) Յունարէնի «Σσ» եւ դրա լատիններէն համարժէք «Ss» տառերը հայերէն տառադարձում ենք միայն «ս», երբեք՝ «զ»: Լատիններէն «s» տառի [z] ձայնեղ արտասանութիւնը (ձայնաւորների միջեւ) լատիններէնի ուղղագրաշրջանի արտասանութիւնն է: Իսկ յունարէնը առ այսօր բոլոր «σ»-երը (բացառութեամբ մասնակի մի քանի դիրքերի) արտասանում է ինչպէս հայերէն [s]-ն: Օրինակներ. Σοφοκλῆς Sophocles Սոփոկլէս, Σεβάστεια Sebaste(i)a Սեբաստիա, Ἀσία Asia Ասիա, Πεισιστράτης Pisistratus Պիսիստրատոս, Caesar Կեսար: Αἰσωπος-ի (Aesopus) Եզո(վ)պոս տառադարձման կողքին ունենք նաեւ Եսովպոս ձեւը, որն աւելի ճիշտ է արտայայտում յունարէն հնչումը: Նոյնիսկ այն դիրքերում, երբ նոր յունարէնը սիգմա տառը արտաբերում է [q] (ինչպէս՝ κόσμος), հարկաւոր է հարազատ մնալ հին յունարէնի հնչմանը՝ [u] (կոսմոս):

զ) Հին յունարէնն ու լատիններէնը ունեն երկու շարք ձայնաւորներ, մէկը՝ կարճ, միւսը՝ երկայն: Կարճ՝ յուն. Α/Ε/Ι/Ο/Υ, լատ. A/E/I/O/U, երկայն՝ յուն. Ἀ/Ἐ/Ί/Ὠ/ῤ, լատ. Ā/Ē/Ĭ/Ō/Ū (երկայնացման նշանները տպագրիչների գործն են): Երկուքին շարքերի առաջին չորս հնչիւնները հայերէն տառադարձում ենք «ա, ե/է, ի, ո»՝ փոխառու լեզուում լինեն դրանք կարճ թէ երկայն: Օրինակ. Γάλαξία Գաղատիա (առաջին երկուսը կարճ են, վերջինը՝ երկայն), Δέλα Դելտա, Ἀφρικῆ Ափրիկէ, Διογένης Դիոգենէս, Ἔκτωρ Հեկտոր:

Հայերէնի Ե/է ընտրութիւնը, հակառակ շատ տարածուած կարծիքի, կախուած է ո'չ թէ յունարէնի կարճ կամ երկայն ձայնաւորի առկայութիւնից («Εε» կամ «Ηη»), այլ հայերէնի հնչիւնական ներքին օրէնքներից (տե՛ս վերը՝ Հայերէն տառադարձու-

թեան հնչիւնական սկզբունքների բաժինը): Հետեւաբար՝ հայերէն «է»-ի գրութիւնը պայմանաւորուած չէ յունարէն ետայի (Ηη) առկայութեամբ:

Ինչպէս նշել ենք վերը, հայերէնի ուղղագրական կանոնների հետեւանքն այն է, որ փոխառեալ բառերի սկզբին երբեք չենք գրում «է» (եթէ իհարկէ այն ձայնաւորից առաջ չէ), այլ միայն «ե», ինչպէս՝ Եգիպտոս, Եթովպիա, Եւրոպա, Եփեսոս, Եւֆրատէան Պոմոս: Միեւնոյն ժամանակ, ինչպէս նշել ենք նախորդ բաժնում, պարտադիր չէ, որ բոլոր անուններում բառասկզբի «ե»-ը [յե] հնչի: Շատ դէպքերում այն կարող է հնչել պարզ [ե/է] (API [e]). օր.՝ Եմիլիանոս, Եմէաս, Եպիկուրոս, Եպիրոս եւ այլ ձեւերում:

Յունարէնի «Υυ» տառը յաջորդաբար ունեցել է երեք արտասանութիւն. նախ, հնագոյն շրջանում՝ պարզ [ու], այնուհետեւ՝ առաջնայեղուային [իւ] (Ֆրանսերէն «u», գերմաներէն եւ թուրքերէն «ü»), API [y]), վերջը, եւ այսօր էլ՝ պարզ [ի]: Հայոց գրերի գիւտի շրջանում տառի արտասանութիւնը թերեւս անցնում էր [իւ]-ից [ի]-ին, որովհետեւ հայերէն փոխառած անուններում ունենք թէ՛ մէկը, թէ՛ միւսը. Βυζάντιον Բիւզանդիոն, Φρυγία Փոփուգիա, Բայց՝ Θουκυδίδης Թուկիդիդէս, Λυκοῦργος Լիկուրգոս:

«Ωω»-ն համապատասխանում էր յունարէն երկայն «Οο»-ին: Հայերէն տառադարձումներում մեր հին մատենագիրները այն յաճախ արտայայտել են «ով» տառակապակցութեամբ. Հերովդէս, Յովհաննէս, Եզովպոս, Եթովպիա, Յովսէփ: Աւանդական տառադարձութիւնները յարգելով ու պահպանելով հանդերձ, կարծում եմ՝ աւելի բնական կը հնչի, եթէ այսօր գերադասենք առանց «վ»-ի ձեւերը, ինչպէս՝ Էκτωρ Հեկտոր, Μαραθών Մարաթոն, Παρθενών Պարթենոն եւ այլն:

է) Յունարէնի բուն (իսկական) կոչուած երկբարբառները հայերէն տառադարձում ենք ըստ դրանց հինգերորդաբան արտասանութեան, այնպէս ինչպէս նրանք ըստ երեւոյթին հնչում էին հայոց գրերի գիւտի ժամանակ: «Ι»-ով կազմուածները այլեւս երկբարբառային արտասանութիւն չունէին. յունարէն «ΑΙ»-ն (լատիներէն ΑΙ, աւելի ուշ՝ ΑΕ) հնչում էր [ե/է] (հայերէնի դրութիւնը, ինչպէս եւ «Ε/Η»-ի դէպքում, ըստ հայերէնի ներքին օրէնքների), յունարէն «ΕΙ»-ն (լատիներէն ΕΙ/Ι) հնչում էր [ի], իսկ «ΟΙ»-ն (լատիներէն ΟΙ, աւելի ուշ՝ ΟΕ) հնչում էր յունարէն [ի], լատիներէն՝ [ե/է]: Օրինակներ. Ἡφαιστος Հեփեստոս, Φεΐδιαι

Փիդիաս, *Εὐβοία* Եւբիա (*ըստ երեւոյթին գիտակցած որպէս «-իա» վերջաւորութիւն»), աւելի յաճախ ունենք՝ Βοιωτία* Բէւովսիա, *Οἰδί- πους* Յդիպուս²⁰:

Յունարէն «Υυ»-ով կազմուած «au» եւ «eu» երկբարբառների երկրորդ մասնիկը կիսաձայն հնչիւն էր: Յունարէն «AY»-ը (ո- րին համապատասխանում է լատիներէն AU-ը) հնչում էր [աւ] API [aw] (հետագայում ե'ւ յունարէնը, ե'ւ հայերէնը այն վերածե- ցին [ալ] արտասանութեան²¹), իսկ յունարէն «EY»-ը (լատիներէ- նում EU) հնչում էր [եւ] API [ew] (հետագայում [եվ]): Ինչ վերա- բերում է յունարէն «OY»-ին, այն դեռեւս Ք. ա. Դ. դարից է դար- ձել պարզ ձայնաւոր եւ լատիներէնում իսկ տառադարձուել է պարզ «U»: Մետրոպ Մաշտոցը այն գրանցել է «ՈԻ» երկնիշ տա- ռով, որը մինչեւ այժմ էլ ուժի մէջ է: Օրինակներ. Δαυλὶς Դաւլիս, Αὐγέας / Αὐγείας Աւգէաս / Աւգիաս, Εὐρυπιδὸς Եւրիպիդէս, Εὐξείνος (πόντος) Եւփքնեան (Պոնտոս), Πλούταρχος Պլուտարքոս, Θουκυδίδης Թուկիդիդէս, Ίουστινιανός Յուստինիանոս: Լատիներէն «au» երկ- բարբառը նոյնպէս ընդունուած է տառադարձել «աւ»։ Claudius Կլաւդիոս, Aurelius Աւրելիոս: Այն դէպքերում, երբ «աւ» տառա- դարձումը հայերէնում վերածուել է [ռ] հնչման, հայերէն կարող ենք գրել կրոր «օ» տառով: Augustus Օգոստոս, Παύλος Պօղոս:

ը) Հնագոյն յունարէնն ունէր նաեւ երկայն ձայնաւորներով երկբարբառներ (αῖ, ηῖ, ωῖ), որոնց իոտան (յովտը) թէեւ մի ժա- մանակ հնչում էր, հետագայում համրացաւ եւ գրութեան մէջ այսօր մնացել է որպէս ենթագիր նիշ (α̃, η̃, ω̃): Այս երեք երկ- բարբառները, դասական արտասանութեամբ, չեն տարբերուած համապատասխան երկայն ձայնաւորներից եւ նոյն արժէքն ունեն ինչ որ երկայն «α̃, η̃, ω̃» ձայնաւորները: Ուստի դրանց գործնա- կան տառադարձումը (ոչ գիտական) նոյնն է՝ «ա», «ե/է», «ռ(վ)»: Օրինակներ. Ἄιδης Ἄδης Հադէս, Ἡρώδης Ἡρώδης Հերովդէս:

20 *Եդիպուս* անունը աւելի յաճախ տառադարձում են *Եդիպոս* (լատիներէն *Oedipus*-ից, քանզի լատիներէն «us» վերջաւորութիւնը տալիս է «ոս», տե՛ս ստորեւ): Սակայն յունարէնի «πους»-ը վերջաւորութիւն չէ, այլ նը- շանակում է «ոտք» (անուան քառացի թարգմանութիւնը հայերէն կը լի- մեր «Այտոտն»):

21 Որտեղ [լ] հնչիւնը, յաջորդ խուլ բաղաձայնից առաջ, խլանում է [ֆ]-ի. [աֆտո-], [տաֆտո-] եւ այլն:

թ) Դասական հին յունարէնն արդէն [h] հնչիւնը կորցնելու ճանապարհին էր. բարբառների մի մասը (էոլիական, յոնիական) այն արդէն կորցրել էր, միւսներում (ատտիկեան, դորիական) այն միայն բառասկզբին էր հանդիպում: Ընդունելով յոնիական այբուբենը, աթենացիները Ք. ա. 403 թուականից «Ηη» տառին (որը հին այբուբենում ծառայում էր [h] հնչիւնը արտայայտելու համար) վերագրեցին երկայն [h]-ի դերը: [λ] ձայնը բառասկզբում արտայայտելու համար, շատ աւելի ուշ, ձայնաւորի վրայ դրեցին մի «փշիկ». դէպի աջ թեքուած (') այն նշանակում էր որ ձայնաւորը իր առջեւից [h] ձայն ունի (թաւ հագագ՝ չունչ), դէպի ձախ թեքուած ('), որ չունի (նուրբ հագագ): Օրինակ. Έρμης Հերմէս, բայց Έφεσος Եփեսոս: Թաւ հագագը հայերէն (եւ լատիներէն) արտայայտում ենք «Հ» տառով (լատիներէն՝ «H»): Թէեւ յունարէնն այնուհետեւ լրիւ կորցրեց իր [h] հնչիւնը, հայերէնում այն միշտ առկայ է. Հերակլէս, Հոմերոս, Հերովդէս, Հալիպոնատոս:

ժ) «Λ» (լայ) տառը յատուկ ուշադրութեան է արժանի: Յունարէն այն միշտ արտասանուել է լատիներէն [L], եւ չիօթի աղբիւրը հայերէնից է գալիս: Ինչպէս վերը ասացինք, Ե. դարում հայերէն «ղ» տառը արտասանում էր թաւ [l]: Այդ ունչաւոր լիւնը աւելի ուշ վերածուեց այն հնչիւնին, որն այսօր մենք ճանաչում ենք «աղ», «ղեկ», «աղեղ» բառերում (այսինքն՝ [խ]-ի ձայնեղ տարբերակը): Այդ է պատճառը, որ հին յունարէնից կամ նրա միջոցով եկած բազմաթիւ անուններ հայերէն տառադարձած են «ղ»-ով՝ Դուկաս, Աղեֆսամդր, Պղատոն, Պիղատոս, Գաղատիա, Երուսաղէմ, Բեթղեհէմ, Կողքիս եւ այլն:

Այսօր, կարծում ենք, աւելի բնական կը լինի յունարէնից եկող անունները տառադարձել «լ»-ով, աւանդական դարձած հայերէն ձեւերը, բնականաբար, թողնելով այնպէս, ինչպէս որ կան: «L»-ի օրինակներ. Λουκοῦργος Լիկուրգոս, Λήμνος Լեմնոս, Λυδία Լիւդիա:

Ժա) Յունարէն «Ρ» (ռոտա) տառը (լատիներէն «R») հայերէն արտայայտում ենք կա՛մ «ր», կա՛մ «ռ» (մեծ մասամբ «ն» տառից առաջ): Օրինակներ. Σωκράτης Սոկրատ(էս), Τάριταρος Տարտարոս, Αναξάγορας Անաքսագորաս: «ն»-ից առաջ. Τισσαφέρνης Տիսափեռնէս, Φαρνάκης Փառնակէս, Παρνασ(ο)δός Պառնաս(ոս), Σμύρνη Ջմիրուհիա (նկատեցէ՛ք «Σ» / «Ջ» անկանոն տառադարձումը – երեւի՝ կենդանի արտասանութեան ազդեցութեամբ է):

Միշտ թաւ հազագ ունէր բառասկզբի «P» (rho) տառը: Լատիններէնը դա արտայայտել է «RH» տառակապակցութեամբ. Rhodus, Rhameses, rhetor, Rhea, rhythmus: Հայերէն տառադարձութեան հերթագայութիւնն աւելի հարազատ է հին յունարէն արտասանութեանը, նախ՝ [h], այնուհետեւ՝ [n]. օրինակներ՝ Ρόδωι Հռոմ, Ρόδος Հռոդոս, Ρωίμη (կամ Ρωμία) Հռիփսիմէ, ρήτωρ հռետոր:

Ժբ) Հին յունարէնի արթենական հին այբուբենը (մինչեւ Ք.ա. 403 թ.) ունէր «F» տառը (հին անուանումը՝ [վե'ի] կամ [ւե'ի]: Հետագայում, ձեւի պատճառով, կոչուեց դիգամ(մ)ա, այսինքն՝ երկգամ(մ)ա): Սրանից է ծագել լատիններէն «F» տառը: Յունարէն այդ տառի արտասանութիւնը շրթնաշրթնային API [w] էր (ինչպէս այսօր անգլերէնում): Դասական (ատտիկեան) հին յունարէնը այդ տառը այլեւս չի գործածում (այն աւելի երկար պահպանուել էր հին յունարէնի այլ բարբառներում): Հաջուադէպ, երբ հարկ լինի այն տառադարձել հայերէն, ամենալաւ համարժէքը կը լինի մեր [վ] հնչիւնը: Օրինակ՝ φεργος վերգոս (դասական՝ έργος):

Ժգ) Հին յունարէնի խոշոր բարբառախմբերն էին յոնիականը, էոլիականը, դորիականը եւ արկադակիպրականը: Բարբառային արտասանութիւնները սովորաբար չեն արտայայտուում հայերէն գործնական տառադարձութեան մէջ: Եթէ գիտական գրադարձութիւնը փորձում է տարբերութիւններ դնել բարբառներով արտայայտուած անունների միջեւ, ապա գործնական տառադարձութիւնը սովորութիւն ունի հին յունարէն բոլոր անունները տառադարձել յոնիական բարբառի ատտիկեան արտասանութիւնից, որը եւ համընդհանուր հին յունարէնի դասական ձեւն է: Օրինակ. Σαπφώ Սապփո, եւ ոչ թէ Ψάπφω Փսապփո (բանաստեղծուհու մայրենի՝ էոլիական ձեւը):

Ժդ) Յատուկ պէտք է խօսել լատիններէն «C» (անունը՝ «կէ»²²) տառի արտասանութեան մասին: Յայտնի է որ դասական լատիններէն այդ տառը միշտ եւ ամենուր հնչում էր [կ]. օրինակ՝ cerasum (կեռաս), Caesar (կեսար) եւ այլն: Ք. յ. մօտաւորապէս Դ.-Ե. դարերից, տառի հնչողութիւնը [e] եւ [i] հնչիւններից առաջ վերածուեց նախ [g]-ի, ապա՝ իտալիայում [չ]-ի, Ֆրանսիայում [ս]-ի, Սպանիայում՝ միջատամային API [θ]-ի: Գերմաներէնը պահել է

22 Խոսելի է սովետական շրջանից մնացած «ցէ» արտասանութիւնը, որը ոռուսերէնի եւ գերմաներէնի ձեւն է:

միջանկեալ այդ [g] արտասանութիւնը (որից էլ, լեհերէնի միջոցով, փոխ է առել ռուսերէնը): Այսօր լատինաբան գիտական բոլոր կազմակերպութիւնները կոչ են անում վերականգնել վաղեմի [y] արտասանութիւնը: Դասական հայերէնը (ինչպէս եւ յունարէնը) միշտ հարազատ է մնացել «C» տառի [y] հնչմանն ու տառադարձմանը: Միայն խորհրդային շրջանում, ռուսերէնի ազդեցութեամբ, Հայաստանի արեւելահայերէնը փորձեր արեց տառը նշուած դիրքերում «ց» տառադարձելու: Յիցերոն, ցենտուրիոն, Յերքեր: Սակայն այսօր ժամանակն է թօթափելու այդ սխալը եւ վերադառնալու աւանդական, եւ ճիշտ, «y» տառադարձութեանը:

Նշենք նաեւ որ հնագոյն լատիներէնում «C» տառը արտա-յայտում էր նաեւ [g] հնչիւնը, սակայն «G» տառը ներմուծելուց յետոյ (Ք. ա. Գ.-Բ. դարերից) հարցը այլեւ արդիական չէ այսօրուայ գործնական տառադարձութեան համար:

Ժե) Լատիներէն մի քանի վերջածանցներ հայերէնում իրենց աւանդական տառադարձութիւնն ունեն (տե՛ս աղիւսակը ստորեւ): Հին հեղինակները ոմանք նոյնացրել են հին յունական վերջածանցներին (օրինակ՝ ստուգաբանօրէն նոյն ծագումն ունեցող «-us» վերջածանցը նոյնացրել են «-ος»-ին, «-um»-ը՝ «-ον»-ին եւ այլն):

լատիներէն	օրինակներ	հայերէն	օրինակներ
-us	Augustus, Brutus	-nu	Օգոստոս, Բրուտոս
-ius	Tiberius, Antonius	-nu	Տիբերիոս, Անտոնիոս
-um	Mediolanum, Capitolium	-ոն	Մեդիոլանոն, Կապիտոլիոն
-ium	silicium, calcium, calium	-իոն	սիլիկիոն, կալկիոն, կալիոն ²³
-o	Cicero, Nero, Strabo	-ոն	Կիկերոն, Ներոն, Ստրաբոն
-io	Scipio	-իոն	Սկիպիոն
-ans	Constans	-աս	Կոստաս
-ens	Valens, Clemens	-էս	Վալէս, Կլեմէս
-der	Alexander (յունաբէն է)	-դր(ոս)	Ալեքսանդր(ոս)
-ter	magister	-տրոս	մագիստրոս

23 Հմմտ. այդ բառերը Ստ. Մալխասեանցի բառարանում: Այդ վերջաւորութիւնն ունեցող փմիական բառի տարրերը «-իոն» պէտք է լինեն (խորհրդային շրջանից մնացած հայերէնը սխալաբար գրում է «-իում»):

Ժզ) Հայերէնն աւանդաբար պահում է «ոս, էս, աս, իոս, իաս» վերջաւորութիւնները՝ Հոմերոս, Պերիկլէս, Աւգիաս: Սակայն երբ անունը շատ է հայանում, աւանդուած ունենք նաեւ անուններ առանց այդ վերջաւորութիւնների: Սակրատ(էս), Արիստոտել (կամ -էլ), Arcadius Արկադ(իոս): Ազաթանգեղոսն ունի ե՛ւ «Գրիգորի-նս», ե՛ւ «Գրիգոր» ձեւերը:

Տառադարձման տեսակէտից հետաքրքրական է նաեւ հետեւեալ հարցը. յունարէն (եւ լատիներէն) անունները ճիշտ է անուանակա՞ն (ուղղական) հոլովից տառադարձել, թէ՞ բառարմատից (յեռուելով օրինակ՝ սեռական հոլովի ձեւերի վրայ): Ξενοφών-ը անուանական հոլովն է, սակայն սեռականն է Ξενοφώντ-օս (որից դուրս են բերում արմատը): Նոյնպէս եւ Ատլաս (Ἀτλας - Ἀτλαντ-օս), Ալիս (Ἀλλίς - Ἀλλίδ-օս), Թայիս (Θαΐς - Θαΐδ-օս), Երոս (Ἔρως - Ἐρωτ-օս): Հայերէնը (ինչպէս եւ եւրոպական մի քանի լեզուներ) հարցը լուծել է անուանական հոլովի օգտին (ի տարբերութիւն օրինակ՝ ռուսերէնի, որը նախընտրում է բառարմատը՝ Ксенофонт, Атлант, Авлида, Фаида, Эрот):

Ժէ) Լատիներէն «aia, aiu» եւ նման տառակապակցութիւնների մէջ (երբ օրինակ՝ «a»-ին հետեւում է «i») ձայնը, որին էլ հետեւում է մի այլ ձայնաւոր) աւանդական տառադարձութիւնը լատիներէն «i» ձայնաւորը հայերէն փոխարկում է «ի»-ի, միեւնոյն ժամանակ «ա»-ից յետոյ դնելով հայերէնի պահանջած «յ» կիսա-ձայնը. օրինակ՝ Gaius Գայիոս, Traianus Տրայիանոս, նմանապէս եւ մեր, արդէն հայացած, «Գայիանէ»-ն: Ուշադիր պէտք է լինել. առանց «ի»-ի ձեւերը սովետական պարզեցրած ուղղագրութեամբ են:

Ժը) Խորհրդային շրջանում զանազան խոտորումներ տեղի ունեցան մեր աւանդական տառադարձութեան մէջ, ինչպէս՝ լատիներէնի «-(h)ոն» վերջաւորութեան տեղը «-(h)ում» (ներառեալ՝ այդ վերջաւորութիւնն ունեցող քիմիական տարրերի բոլոր անունները), այլեւ՝ մեծ տարածում գտած «-ցիա, -եմցիա, -անցիա» վերջաւորութիւնները (փոխանակ՝ «-տիա, -եմտիա, -անտիա»: Փորձել են տառադարձել նաեւ «-ուս» վերջաւորութեամբ (փոխանակ՝ «-ոս»): Հարկաւոր է խուսափել այդպիսի տառադարձումներից. դրանք խորթ են հայերէնի աւանդութեանը եւ անյարգի:

Խուսափել է պէտք նաեւ՝ վաղուց աւանդական դարձած հայերէն անունները նորովի, բայց սխալ, տառադարձելուց: Decimus

Junius Juvenalis լատին բանաստեղծի անունը հայերէն ականդաբար Յոքնալ է։ Վիքիպեդիայում այն սովետական պարզեցրած ուղղագրութեամբ գրած է «Դեցիմուս Յունիուս Յովնեմալիս»։ Ինչպէս տեսնում ենք, լատիններէն «C» տառը դարձել է «ց», բառասկզբի «J»-երը՝ «Յ» (թէեւ պարզեցրած ուղղագրութեամբ պէտք է լինէին «Հ»), «us» վերջաւորութիւնը՝ «ուս» (փոխանակ՝ «ոս»-ի), «uv» տառակապակցութիւնը՝ «ուվ» (թէեւ հայերէնում «ու»-ից յետոյ «վ» չի կարող գալ, պէտք էր գրել՝ «ով»)։ Մի խօսքով, տառադարձութեան կանոնների չհասկացման արդիւնք է սա եւ ականդականի արհամարհանք։ Յոքնալի նորովի, հայեցի ու հաճելի տառադարձութիւնը կը լինէր Դեկիմոս Յունիոս Յովնեմալ (իս) (կրկին անգամ ընդգծելով, որ նախ եւ առաջ պէտք է յարգել վաղուց արդէն հաստատուած ականդական ձեւերը)։

ԺԹ) Յունարէնը եւ լատիններէնը կիրարկում են երկբարբառների տրոհման երկկէտ նշան, որը յուշում է, որ երկբարբառի ձայնաւորները պէտք է առանձին առանձին արտասանել։ Θάϊς Թայիս, Τραϊανός Տրայիանոս։ Տառադարձութիւնը, ուստի, ուշադիր պէտք է լինի այդ հարցում եւս։

Ի) Յունարէնի եւ լատիններէնի շեշտը շարժուն է, այն կարող է ընկնել վերջին երեք վանկերից մէկի վրայ (լատիններէն՝ միայն նախափերջին (վերջնթեր) եւ նախանախափերջին (նախափերջնթեր))։ Աւանդական եւ կենդանի հայերէնը, սակայն, հայերէնի շեշտադրութեան կանոններից ելնելով, լրիւ արհամարհում է օտար այլափանկ շեշտադրութիւնը եւ բոլոր փոխառութիւնները բնազդաբար շեշտադրում վերջին վանկերի վրայ։ Օրինակ՝ Ἡρόδοτος Հերոդոտոս, Ἀλξάνδρος Ալեքսանդր, Ἡρόκλεις Էրեկլէս։

Խորհրդային տարիներին, ռուսերէնի ազդեցութեամբ, փորձեր եղան լատիններէն բազմաթիւ անուններ շեշտադրել այլ վանկերի վրայ (այդ սովորութիւնը տակաւին իր դարը չի ապրել)։ Սակայն մենք պէտք է խուսափենք այդ՝ հայերէնին ոչ յատուկ հնչողութիւնից։ Օրինակ՝ Գալլիլիա՝, եւ ոչ՝ Գալլիլիա, Իտալիա՝, եւ ոչ՝ Իտալիա։

Խա) Կրկնակ բաղաձայնների տառադարձման խնդիրը ոչ միայն յունարէնի եւ լատիններէնի առնչութեամբ է։ Հայերէնը սովորաբար մերժում է կրկնակ բաղաձայնները (կան բացառութիւններ)։ Մենք էլ խորհուրդ ենք տալիս, որտեղ որ հնարաւոր

է, կրկնակ բաղաձայնները գրել մէկ պարզ բաղաձայնով. Θεσσαλονίκη Թեսսալոնիկէ, Καλλιόπη Կալիոպէ:

Սակայն ունենք կրկնակ բաղաձայններով աւանդական տառադարձութիւններ. "Ελλην Հելլէն (ի տարբերութիւն՝ Έλλην Հելի-նէ), Hannibal Համմիբալ Ամմիբալ, Ἀττική Ատտիկէ, Φίλιππος Փիլիպպոս:

* * *

Որպէս եզրակացութիւն, մեր մօտեցումը հետեւեալն է:

ա) Նախ եւ առաջ պէտք է յարգել ու պահպանել հայերէն աւանդական (դասական) տառադարձումները:

բ) Աւանդական հաստատուած տառադարձում չունենալու պարագայում, եթէ բառի ծագումը յունարէն է կամ թէ բառը հայերէնին է անցել հին յունարէնի միջոցով, տառադարձումը կատարում ենք՝ յարգելով նախ եւ առաջ հին յունարէնի վերոշարադրեալ հնչիւնական օրէնքները եւ հայերէնի տառադարձական աւանդոյթները:

գ) Եթէ բառը լատիներէն ստուգաբանութիւն ունի կամ թէ բառը հայերէնին է անցել լատիներէնի միջոցով (եւ միեւնոյն ժամանակ չունենք յունարէն հաստատուած ձեւ), տառադարձումը կատարում ենք լատիներէնի կանոնների համաձայն, նմանապէս յարգելով աւանդական տառադարձութեան կանոնները:

դ) Եթէ այս կամ այն քերականական ձեւը կամ յատուկ անունը ընդհանուր է յունարէնի եւ լատիներէնի համար, նախապատուութիւնը տալիս ենք յունարէն ձեւերին, որպէս հայերէնին աւելի մօտ, հարազատ ու աւանդական ձեւերի:

Ամփոփում

Մենք այստեղ շօշափեցինք դասական երկու լեզուների տառադարձութեան ոչ սակաւ նրբութիւններ, սակայն այսքանով, բնականաբար, չի վերջանում այդ լեզուների տառադարձութեան համայնապատկերը: Ամէն լեզուի տառադարձութիւնը բարդ ու բազմակողմանի երեւոյթ է՝ ոչ միայն իր ներքին հնչիւնաբանութեամբ ու քերականական կանոններով պայմանաւորուած, այլեւ յաճախ արտաքին՝ այլ լեզուներին առնչուող զանազան հանգամանքներով:

Կարելի է ենթադրել, որ հին յունարէնի ու լատիներէնի հնչիւնակարգերը քարացած են այլեւս²⁴: Այդուհանդերձ, չենք կարող պնդել թէ դրանց տառադարձումը կատարեալ է եւ ամէն ինչ վերջնականօրէն պարզ: Յունարէնի ու լատիներէնի երեք թէ չորս կարգի տառադարձութիւն կարելի է նշել մեր գրաւոր լեզուի ողջ պատմութեան ընթացքում: Ժամանակի հետ փոխուել են փոխատու լեզուների հնչիւնները, փոխուել են եւրոպական հեղինակաւոր լեզուների տառադարձումները, փոխուել է եւ մեր՝ փոխառու լեզուն, եւ մեր տառադարձութեան կանոնները, երբեմն առանց հաշուի առնելու աւանդոյթը, «յարմարուել» են զանազան նոր իրողութիւններին:

Մի կողմից՝ արեւմտահայերէնն է զո՛հ գնացել գրական արեւմտահայերէնի երկաստիճան համակարգին (թէեւ արեւմտահայերէնը, ի պատիւ նրա, աւելի անաղարտ է պահել յունալատինական տառադարձութեան աւանդոյթները²⁵): Միւս կողմից՝ արեւելահայերէնը, խորհրդային դարաշրջանում զո՛հ գնալով ռուսերէնի տիրապետող ազդեցութեանը, հրաժարուել է աւանդական, ճշմարիտ հայերէն բազմաթիւ սկզբունքներին:

Անհրաժեշտ է, որ հայոց լեզուն վերագտնի հին յունարէնի ու լատիներէնի իր գրագէտ տառադարձութիւնը: Այդ նպատակին հասնելու համար մենք հետեւեալ մօտեցումն ու անհրաժեշտ քայլերն ենք ակնկալում:

ա) Տառադարձութեան խնդիրը ընդհանրապէս, եւ յունալատինականը՝ մասնաւորապէս, անհատական լուծում չի կարող ունենալ: Մենք այստեղ, բնականաբար, յաւակնութիւնը չունենք տալու այդ տառադարձութեան վերջնական համակարգը եւ մէկընդմիջտ աւանդելու այն հասարակութեանը: Խնդիրը հայագէտների, յունագէտների ու լատինագէտների սեղանին պէտք է դնել: Իրայն տարբեր մասնագէտների խորհրդակցութեամբ կը կարողանանք վերջնական եւ բոլորին ընդունելի տառադարձութիւն որդեգրել:

24 Եթէ հաշուի չառնենք լեզուագիտական հետազոտութիւնների զանազան նորոյթները:

25 Նոյնը չենք կարող ասել այսօրուայ «սփիւռփակայերէնի» վերաբերեալ, որը արեւմտահայ գրական լեզուի անկազմակերպ դրսեւորումն է Սփիւրփի զանազան գաղութներում:

բ) Մշակած ու համատեղ ընդունած սկզբունքներն ու կանոնները անհրաժեշտ է այնուհետև հրապարակել եւ յանձնել բոլոր այն հիմնարկութիւններին (գիտական, հրատարակչական, ուսումնական եւ այլ), որոնք իրենց առօրեայ գործունէութեան մէջ առնչուում են յունալատինական տառադարձութեան հարցերին: Գիտական եւ ուսումնական (նախ եւ առաջ՝ դպրոցական) հետազայ տպագիր գրականութիւնը պարտաւոր է լինելու յարգել ընդունած կանոնները:

գ) Կարելոր խնդիր է յունաբան ու լատինաբան մասնագէտների շարունակական պատրաստումը: Խորհրդային շրջանում հայաստանեան այդպիսի դպրոց գոյութիւն չունէր եւ մեր մի բոլւ մասնագէտները կամ հայրենադարձ, կամ՝ Խորհրդային Միութեան ուսումնասկայրերում ուսանած անձինք էին: Սփիւռքը նոյնպէս հեռու էր յունագիտութիւնից ու լատինագիտութիւնից, բացառութեամբ Թերեւս Սբ. Ղազարի Մխիթարեան ակադեմիայի, որը պարբերաբար զբաղուել է այդ հարցերով, սակայն որի հեղինակութիւնը, դժբախտաբար, Խորհրդային տարիներին չէր տարածուում Հայաստանի գիտական մարմինների վրայ:

Այսօր դժուար է ասել թէ Հայաստանում գոյութիւն ունի յունաբան կամ լատինաբան հայ դպրոց: Սակաւաթիւ մասնագէտները մեծ մասամբ ինքնուրոյն կամ օտար ակերում ուսում ստացած անհատներ են: Լեզու դասաւանդող ուսումնասկայրերը եւ լեզու ուսումնասիրող հիմնարկութիւնները մեծ պատասխանատուութիւն ունեն այստեղ: Անհրաժեշտ է, դարեր անց, վերստեղծել յունաբան ու լատինաբան մեր դպրոցները, որպէսզի հայաստանեան իւրաքանչիւր սերունդ ունենայ գոնէ նուազաթիւ մասնագէտներ:

դ) Հայաստանի գիտական հաստատութիւնները պէտք է իրենց վրայ առնեն հայոց լեզուի հետ կապուած եւ հեղինակաւոր որոշումներ պահանջող խնդիրները: Առանց նրանց վերահսկողութեան եւ հեղինակաւոր խօսքի՝ գիտնական հասարակութիւնը ինքնակամ չի կարող ինքն իրեն պարտադրել այդպիսի կնճոտ հարցեր, մանաւանդ՝ հայ աշխարհասփիւռ մասնագէտները, որոնք չունեն համահայկական որեւէ գիտնական միասնութիւն:

Յունալատինական տառադարձութեան ներկայ իրավիճակը Հայաստանում եւ Սփիւռքում բնականաբար բարձիթողի վիճակ է: Հայ լեզուաբաններ, հայագէտներ ու իմաստասէրներ դարեր

չարունակ աշխատել են խնդրի վրայ եւ հայոց լեզուն բարձրացրել համաշխարհային մակարդակի: Հայոց լեզուն այդ առումով համընթաց է քայլում աշխարհի առաջաւոր լեզուների կողքին:

Միեւնոյն ժամանակ չենք կարող գոհանալ յունալատինական տառադարձութեան արդի խառնաշփոթ վիճակով: Բացասական դեր են խաղում, մեր համոզմամբ, երկու խոշոր հանգամանք. ա) յետանկախական հայաստանեան (արեւելա)հայերէնի անդիտակից կախուածութիւնը ռուսերէն լեզուով եկող լուրերից ու գրականութիւնից, բ) հայոց լեզուի երկփեղկութիւնը արեւմտահայերէն ու արեւելահայերէն ճիւղերի:

Այդուհանդերձ, վերջին տարիներին նկատում ենք որոշակի ձգտում դէպի ճշմարիտ հայոց լեզու եւ յստակ ցանկութիւն յունալատինական անունների հայերէն տառադարձումը յետ բերելու հայերէնի աւանդական շաւղին: Սա անշուշտ գիտակցական եւ միեւնոյն ժամանակ պատասխանատու աշխատանք է: Յունալատինական անունների կանոնաւորումը ի վերջոյ նպաստելու է հայեցի կրթութեան միասնութեանը եւ հայ դպրոցի ու գիտութեան հեղինակութեան աճին:

Յաւելում – Աղիւսակ հնչիւնների

յումարէմ	տառի յումարէմ ամուսնումը	լատիներէմ	տառի լատիներէմ ամուսնումը	հայերէմ տառադարձումը
B	բետա	B	բէ	Բ
Π	պի	P	պէ	Պ
Φ	փի	PH	-	Փ
Ψ	փսի	PS	-	ՓՍ
M	մու, մի	M	եմ	Մ
Γ	գամ(մ)ա	G	գէ	Գ
K	կապ(պ)ա	C (K)	կէ (կա)	Կ
X	քի	CH	-	Ք
Ξ	քսի	X	իքս	ՔՍ
Γ (-Γ/K/X/Ξ)	-	N (-G/C/X)	-	Ն (-Գ/Կ/Ք)

յումարեմ	տառի յումարեմ ամուսնումը	լատիններեմ	տառի լատիններեմ ամուսնումը	հայերեմ տառադարձումը
Δ	դելտա	D	դէ	Դ
T	տաւ	T	տէ	Տ
Θ	թետա	TH	-	Թ
Z	զետա, ձետա	Z	զետ	Զ (Ձ)
N	նու, նի	N	նն	Ն
Σ	սիգմա	S	ես	Ս
Λ	լամբդա	L	ել	Լ, Ղ
P	հռո	R	եր	Ր / Ռ
F	դիգամ(մ)ա	—	-	Վ
—	-	F	եֆ	Ֆ
—	-	Q(U)	գու	Գ(ՈՒ)
—	-	V	վէ	Վ / Ի / ՈՒ
A	ալփա	A	ա	Ա
E	եփսիլոն	E	ե	Ե / Է
I	իոտա, յովտ	I, J	ի, իոտ (յոտ)	Ի / Յ
O	ոմիկրոն	O	ո	Ո
Y	իւփսիլոն	Y	իփսիլոն	Ի, ԻԻ
Ā	-	Ā	-	Ա
H	ետա	Ē	-	Ե / Է
Ī	-	Ī	-	Ի
Ω	ոմեգա	Ō	-	Ո(Վ)
Ŷ	-	Ŷ, Ū	-	Ի, ԻԻ
H (ά έ ι ό ύ ή ώ)	-	H	հա	Հ
Ψ	-	RH	-	ՀՌ
ΑΙ	-	ΑΙ, ΑΕ	-	Ե / Է
ΕΙ	-	ΕΙ, Ι	-	Ի

յումարէմ	տառի յումարէմ ամուսնումը	լատիններէմ	տառի լատիններէմ ամուսնումը	հայերէմ տառադարձումը
OI	-	OI, OE	-	ի, ե/է
YI	-	—	-	ի
AY	-	AU	-	Աի
EY	-	EU	-	Եի
OY	-	U	ու	Ոի
ɑ	-	A	-	Ա
η	-	E	-	Ե / Է
φ	-	O	-	Ո(Վ)

ԱՐՄԷՆ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

Résumé

LES PRINCIPES DE LA TRANSLITTERATION ARMENIENNE DES NOMS PROPRES ETRANGERS II partie – langues classiques (grec ancien et latin)

ARMEN MICHAELIAN

Le présent article fait partie d'une série d'articles qui traite de la translittération arménienne des noms propres depuis diverses langues étrangères (de la façon de transcrire les noms étrangers en caractères arméniens). La première partie de la série était consacrée aux langues du Proche-Orient (l'arabe, le persan, le turc et l'azerbaïdjanais) ; voir Armen Michaelian, *The Principles of Transliterating Foreign Proper Names into Armenian*, Part I – Middle Eastern Languages [en arménien], *Haigazian Armenological Review*, vol. 40, Haigazian University Press, Beirut 2020, pp. 341-364.

La deuxième, présente partie de cette série traite des deux langues classiques, le grec ancien et le latin. La suite de la série sera consacrée aux langues européennes (français, anglais, allemand, russe etc.) et orientales (hindi, chinois et japonais). Avant d'aborder les langues européennes, il est impératif de traiter les langues grecque et latine qui ont eu une influence considérable sur toutes les langues européennes.

Si la translittération de ces deux langues classiques était bien établie et était commune à tous les Arméniens jusqu'au XIX^e siècle, la scission de l'arménien en deux branches littéraires d'un côté, et l'influence du russe sur l'arménien oriental pendant l'époque soviétique de l'autre côté, ont apporté un certain désordre dans la translittération traditionnelle, et le même nom propre peut aujourd'hui être écrit de plusieurs façons (parfois trois ou quatre).

L'auteur réaffirme sa position, déjà exprimée dans la première partie de la série, que la translittération (il s'agit de la translittération pratique quotidienne et non de la transcription scientifique) doit respecter à la fois la tradition millénaire et les règles phonétiques de l'arménien classique.

La translittération arménienne classique des noms propres grecs et latins a fait ses preuves depuis 1600 ans, et l'unité de la langue et son prestige exigent

que ses normes soient respectées par tous les écrivains de langue arménienne. L'auteur admet volontiers certaines modernisations dans l'écriture des noms propres grecs et latins. Néanmoins, comme chaque langue a ses principes phonétiques et ses traditions, l'arménien littéraire a aussi les siens.

L'article donne la translittération de chaque phonème et lettre grecs et latins vers la langue arménienne et passe au crible deux dizaines de subtilités de cette translittération. Des exemples de noms propres illustrent les principes et les nuances de l'exercice. Le lecteur a aussi à sa disposition un bref résumé concernant les principes de la prononciation historique du grec ancien et celle du latin par différentes écoles européennes, ainsi que, à la fin de l'article, un tableau récapitulatif de la translittération des phonèmes grecs et latins.

L'auteur souligne encore une fois que la translittération n'est pas un phénomène individuel et qu'elle ne peut être gérée par une seule personne ou un seul spécialiste. Elle doit être objet de discussions interdisciplinaires et doit être confirmée et « anoblie » par un corps scientifique d'autorité. Ses règles doivent ensuite être diffusées et transmises aux instances de surveillance linguistique qui assureront leur application sur l'ensemble de l'activité linguistique arménienne (en particulier dans l'éducation nationale). De cette façon seulement la langue imposera son autorité, et les normes deviendront obligatoires pour l'ensemble de la communauté arménienne à travers le monde. Cela stabilisera la langue et la fera plus apte à souder l'unité nationale.